թիւնից դուրս չունի իր իսկական պատմութիւնը: Նրա արտաքին դիպուածային կեանքը գիմադրուած արժէքների սիւների վրայ կանգնած չէ:

Եւ սակայն՝ անհասկանելի բնազդ՝ հայ ժողովուրդը իր պատմութեան երկրաշարժային ցնցումների վայրից երբեք դուրս չի գալիս, ճուլումի հեշտ ճամբան չի ընդդիմում, իր լինելիութեան շուրջը որոշակի սահմաններ է գծում, իր վիշտը եւ իր պայքարը գոյացման ուժի է վերածում, իր պաշտամունքի վայրերը ոճաւորում է, նա կայ, գոյութիւն ունի:

Մեր ամբողջ «խորհուրդը» դրա մէջն է:

* * *

Ինչպէս Եգիպտոսը, Հրէաստանը, Յունաստանը եւ Եւրուպկների աշխարհը, Հայաստանը եւս ունի իր սրբազան աշխարհագրութիւնը, ուր ամէն մի շրջան հանդիսանում է իբրեւ խորհրդանշանը իր ոգու մտաւորական եւ անդրերկրային վայրերի:

Թրակիան հինուց ի վեր հելլենացիների համար ներկայացնում էր սրբութեան երկիր, լոյսի եւ մուսաների հայրենիք, որովհետեւ նրա լեռների բարձունքներից իջել էին աստուածները՝ Զեւսը, Քրոնոսը եւ Ուրանոսը՝ իրենց հետ բերելով բանաստեղծութեան, օրէնքների եւ սրբազան արուեստների գերագոյն ոգիմը: Թամիրիսը, Լինոսը, Ամֆիոնը մտցրել էին բանաստեղծական սեռերը:

Թամիրիսը երգել էր հսկաների պատերազմը, եւ որովհետեւ նրա տաղերը տիեզերածնութեան բանաստեղծական սեռի անկումն էին նշանաբանում, մուսաները անողոքօրէն հանել էին նրա աչքերը, աստուածութիւնից զրկել եւ նրա վսեմ էութիւնը աշուղական թափառումներին յանձնել:

Լինոսը, գիմադրում է հիւսիսի գօրիացիների դէմ եւ լուսնային պաշտամունքի հետ միասին մտցնում է ասիական մելամաղձոտ եւ լալագին երգը:

Ամֆիոնը կառուցողական ուժն է. նրա երգերը շարժման մէջ են դնում քարերը. նրա քնարի ձայների տակ տաճարներ են բարձրանում: Նա արեւային վարդապետութեան եւ գօրիական բանաստեղծութեան վսեմ ու պայծառ ուղղափառութիւնն է եւ չինարար ոգին:

Ու մինչդեռ, առնական, տիեզերածնութեան եւ արեւային աստուածները քաշւում են լեռների միայնութեան մէջ, անապատը՝ վարը, գեղածիծաղ դաշտերի մէջ, լուսնային աստուածները գեղեցիկ քրմուհիների ղեկավարութեան տակ, շոյում են ռամիկ ժողովուրդի կենդանական բնազդը, կրօնական կառուցողական սկզբունքը վեր ածում հաճոյքի եւ հեշտանքի արարողութեան, կեանքը համարում գինի եւ կին եւ ստեղծում հին աշխարհի մասին այն մակերեսային գաղափարը, որը յայտնի է մեր վարժապետներին «հին աստուածներ» անունով:

Թրակիոյ բարձունքներից, առնական աստուածների հետ, մենք քաշուեցինք Հայաստանի լեռները: Վկայ են Արարատը, Արագածը, Գեղամայ լեռները՝ աշխարհիս ամենաանապատային, ամենամենակեաց եւ ամենաարեւային վայրերը: Վկայ են մեր առասպելները: Արան՝ առնական, տիեզերածնական, արեւային եւ Շամիրամը՝ կանացի, լուսնային, դաշտային ծաղիկի հարբեցուցիչ բուրումով: Մեր ամբողջ պատմութիւնը Արայի առնական եւ արեւային պայքարն է ասիական լուսնային, շքեւայտ եւ մելամաղձոտ աշխարհի դէմ: Մինչեւ այսօր էլ մենք արեւով ենք երդւում եւ մեր օճախների մէջ սրբութեամբ պահում ենք կրակը, որպէսզի մութը մեզ չիլանի, եւ տիեզերքը անդունդ չդլորուի:

Դարերի ընթացքին, լեռների բարձունքների վրայ, մեր աստուածները՝ տարածութեան դէմ կանգնած՝ կարողացել էին հասկանալ աստղերի գերագոյն կշռականութիւնը, տիեզերքի կառուցողական ռիթմը եւ անհունի ներուժ լինելիութիւնը: Երբ, մեր հոգիների աղաղակին պատասխանելով, առաջին անգամ նրանք իջան վար, նրանց դէմ կանգնած էր Միթրան, «արեւի» վրայ իշխողը, «ցուլի» զոհաբերողը, թաղաւորական ցեղի ներկայացուցիչը, նուաճողների «ուժեղ ուժը ուժերի», այն, որ տիրում էր առանց «բարիի» եւ «չարի», առանց «պէտքի», «ցանկութեան» եւ «յոյզի» մարդկանց վրայ: Տիեզերքի անսանձ բընաղդները բնորոշող այդ սկզբունքի եւ պայծառութեան մէջ տեղի ունեցած բախումը ցընցեց հայոց աշխարհը, վար գլորեց ժայռերը եւ դղրդիւնով լեցուց սրտերը:

Տաւրոսի լեռներից մինչեւ Արարատեան

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան